

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Հորդանանի Հաշիմյան Թագավորության կառավարության միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Հորդանանի Հաշիմյան Թագավորության կառավարությունը (այսուհետ՝ «Պայմանավորվող Կողմեր»),

ցանկանալով զարգացնել փոխշահավետ տնտեսական համագործակցությունը երկու պետությունների միջև՝ նպատակ ունենալով ստեղծել բարենպաստ պայմաններ մի Պայմանավորվող Կողմի ներդրողների ներդրումների համար մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում,

ընդունելով, որ համաձայնագրի կնքումը կխթանի մասնավոր կապիտալի ներհոսքը և Պայմանավորվող Կողմերի տնտեսական զարգացումը,

համաձայնելով, որ ներդրումների համար կայուն հիմք ստեղծելը առավելագույնի կհասցնի տնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և կնպաստի կենսամակարդակի բարելավմանը,

որոշում ընդունելով կնքել Համաձայնագիր ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին,

համաձայնվեցին հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Սահմանումներ

Սույն Համաձայնագրի նպատակների համար.

1. «Ներդրումներ» տերմինը նշանակում է գույքի կամ իրավունքների ցանկացած տեսակ, որը ներդրված է մի Պայմանավորվող Կողմի ներդրողների կողմից մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում, համաձայն վերջինիս օրենքների և կանոնակարգերի, մասնավորապես, սակայն ոչ բացառապես, ներառելով.
 - ա) շարժական և անշարժ գույքը, ինչպես նաև գույքային իրավունքները, ինչպիսիք են վարկավորումը, պարտքի դիմաց գույքի օտարումը, գրավադրումը, օտար գույք ձեռք բերելու և դրանից եկամուտներ ստանալու և այլ նմանատիպ իրավունքներ,
 - բ) բաժնետոմսերը, բաժնեմասերը և կապիտալի մասնակցության այլ ձևերը, պարտատոմսերը և այլ նմանատիպ պարտավորությունները ընկերությունում,

գ) պայմանագրերից բխող դրամական պահանջները և ցանկացած այլ գույքի կամ պարտավորության գծով պահանջները, որոնք, համաձայն պայմանագրերի, ունեն տնտեսական արժեք,

դ) մտավոր սեփականության իրավունքները, ինչպես սահմանված են Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության հովանու ներքո գտնվող բազմակողմ պայմանագրերում, որոնցում ընդգրկված են նաև երկու Պայմանավորվող կողմերը, ներառում են, բայց չեն սահմանափակում հեղինակային և հարակից իրավունքները, արդյունաբերական սեփականության իրավունքները, ապրանքային նշանները, արտոնագրերը, արդյունաբերական նախագծերը և տեխնիկական գործընթացները, նոու-հաուսները, առևտրային գաղտնիքները, առևտրային անունները և բարի համբավը:

ե) օրենքով կամ պայմանագրով սահմանված՝ տնտեսական և առևտրային գործունեության մեջ ընդգրկվելու իրավունքները, ներառյալ կոնցեսիաները, որոնք նպատակաուղղված են բնական ռեսուրսների մշակմանը, արդյունահանմանը կամ շահագործմանը:

Գույքի և իրավունքների ներդրման կամ վերաներդրման իրավական ձևի փոփոխությունը չի ազդի դրանց դիտարկմանը որպես ներդրումների:

2. «Ներդրող» տերմինը յուրաքանչյուր Պայմանավորող Կողմի համար նշանակում է.

ա) Պայմանավորվող Կողմի քաղաքացի ֆիզիկական անձ, որը կատարում է ներդրում մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում,

բ) իրավաբանական անձ, որը ստեղծվել կամ հիմնվել է այդ Պայմանավորող Կողմի օրենքներին և կանոնակարգերին համապատասխան և ճանաչվում է որպես իրավաբանական անձ, և որը տեղակայվում և կառավարում է իր գործունեությունը մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում:

3. «Եկամուտ» տերմինը նշանակում է ներդրումներից ստացված գումարները, և, մասնավորապես, բայց ոչ բացառապես, ներառում է շահույթը, տոկոսները, կապիտալի աճը, շահաբաժինները, ռոյալթիները և կառավարման վճարները, տեխնիկական օժանդակությունը կամ այլ վճարումներ՝ անկախ դրանց տեսակից:

4. «Առանց հետաձգման» տերմինը նշանակում է այնպիսի ժամանակահատված, որը սովորաբար պահանջվում է փոխանցում իրականացնելու նպատակով անհրաժեշտ ձևակերպումները ավարտելու համար: Այս ժամանակահատվածը կսկսվի փոխանցման համար դիմումը ստանալու օրվանից և չի կարող գերազանցել մեկ ամիսը:

5. «Ազատ փոխարկելի արժույթ» տերմինը նշանակում է ազատ փոխարկելի արժույթ, ինչպես սահմանված է Միջազգային արժույթային հիմնադրամի կողմից համաձայն Միջազգային արժույթի հիմնադրամի Համաձայնագրի Հոդվածների:

6. «Տարածք» տերմինը նշանակում է.

ա) Հայաստանի Հանրապետության համար՝ Հայաստանի Հանրապետության հողային տարածքը, տարածքային ջրերը և օդային տարածքը, որոնց նկատմամբ

Հայաստանի Հանրապետությունն ունի ինքնիշխան իրավունքներ և իրավասություն, համաձայն գործող ազգային օրենքների և միջազգային իրավունքի,

բ) Հորդանանի Հաշիմյան Թագավորության համար՝ Հորդանանի Հաշիմյան Թագավորության հողային տարածքը, ներառյալ ներքին ջրերը, նրա ծովային տարածքներին հարող տարածքները և օդային տարածքները, որոնց նկատմամբ Պետությունը իրականացնում է ինքնիշխան իրավունքներ և իրավասություն՝ համաձայն իր գործող ազգային օրենքների և միջազգային իրավունքի:

ՀՈՂՎԱԾ 2

Ներդրումների խրախուսումը և ներգրավումը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ կխրախուսի և կստեղծի բարենպաստ պայմաններ իր տարածքում մյուս Պայմանավորվող Կողմի ներդրողների ներդրումների իրականացման համար, և կընդունի նման ներդրումները համաձայն իր օրենքների և կանոնակարգերի:

2. Փոխադարձ ներդրումների հույսը խթանելու նպատակով յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ միջոցներ կձեռնարկի տեղեկացնելու մյուս Պայմանավորվող կողմին իր տարածքում ներդրումային հնարավորությունների վերաբերյալ, նմանատիպ հարցման դեպքում:

3. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ անհրաժեշտության դեպքում, առանց հետաձգելու, իր օրենքների և կանոնակարգերի համաձայն, պետք է թույլտվություն տրամադրի մյուս Պայմանավորվող Կողմի ներդրողների կողմից ընդգրկված խորհրդատուներին կամ փորձագետներին իրենց գործունեության իրականացման համար:

4. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, համաձայն է իր մուտքի, կացության և աշխատանքի օրենքների և կանոնակարգերի, անկախ ազգությունից, պետք է բարեխղճորեն և պատշաճ ուշադրությամբ ուսումնասիրի անձնակազմի՝ իր տարածք մուտք գործելու, ժամանակավոր մնալու և աշխատելու հարցումները, ներառյալ բարձր կառավարչական և տեխնիկական անձանց, ովքեր իրենց տարածքում զբաղվում են ներդրումներով: Վերոնշյալ անձնակազմի ընտանիքի անդամներին նույնպես մուտքի և ժամանակավոր կացության հնարավորություն է տրվում ընդունող Պայմանավորվող կողմի կողմից:

ՀՈՂՎԱԾ 3

Ներդրումների պաշտպանությունը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ իր պետության տարածքում մյուս Պայմանավորվող Կողմի ներդրողների ներդրումների և նկատմամբ պետք է ապահովի լիակատար պաշտպանվածություն ու ապահովություն: Պայմանավորվող կողմերից ոչ մեկը չպետք է անհիմն կամ խտրական միջոցներով խոչընդոտի մյուս Պայմանավորվող Կողմի ներդրողների ներդրումների օգտագործմանը, կառավարմանը, գործադրմանը, ընդլայնմանը, վաճառքին կամ այլ գործողությանը, որն ուղղված է ներդրումների տնօրինմանը:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իր տարածքում մյուս Պայմանավորվող Կողմի ներդրողների ներդրումների կամ եկամուտների նկատմամբ պետք է ապահովի արդար և հավասար ռեժիմ համաձայն միջազգային իրավունքի:

ՀՈԴՎԱԾ 4

Ազգային և առավել բարենպաստության ռեժիմ

1. Պայմանավորվող կողմերից ոչ մեկը չպետք է իր տարածքում մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումների և եկամուտների նկատմամբ սահմանի ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն, որը նա տրամադրում է իր սեփական ներդրողներին կամ ցանկացած երրորդ պետության ներդրողների համար նույնանման պայմաններում, որն ավելի բարենպաստ է:

2. Պայմանավորվող Կողմերից ոչ մեկը չպետք է իր տարածքում մյուս Պայմանավորվող կողմի ներդրողներին նրանց ներդրումների կառավարման, պահպանման, օգտագործման, տնօրինման կամ այլ տիրապետման հետ կապված, տրամադրի ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն, որը նա տրամադրում է իր սեփական կամ ցանկացած երրորդ պետության ներդրողներին նույնանման պայմաններում, որն ավելի բարենպաստ է:

3. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ իր տարածքում մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումների և եկամուտների նկատմամբ պետք է ապահովվի ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, ինչպես նախատեսում են սույն Հոդվածի 1-ին և 2-րդ կետերը:

4. Պայմանավորվող Կողմերից ոչ մեկը չպետք է իր տարածքում մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների նկատմամբ պարտադրող միջոցներ կիրառի՝ կապված նյութերի ձեռքբերման, արտադրության միջոցների, շահագործման, տրանսպորտի, իր արտադրանքի մարքեթինգի կամ նմանատիպ պատվերների հետ, որոնք ունեն անհիմն կամ խտրական ազդեցություններ:

5. Սույն Հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները չպետք է մեկնաբանվեն որպես պարտավորեցում մեկ Պայմանավորվող կողմին՝ տարածելու մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների վրա ցանկացած ռեժիմի շահավետությունը, առավելությունները և արտոնությունները, որոնք կարող են տրամադրված լինել առաջին Պայմանավորվող կողմից.

ա) ցանկացած գոյություն ունեցող մաքսային, տնտեսական կամ արժույթային միության, ընդհանուր շուկայի կամ ազատ առևտրի գոտու վերաբերյալ միջազգային կամ փոխադարձ համաձայնագրի համաձայն:

բ) համաձայն ցանկացած միջազգային համաձայնագրի կամ պայմանավորվածության, որը գլխավորապես կամ ամբողջապես վերաբերում է հարկմանը:

ՀՈԴՎԱԾ 5

Օտարում

1. Մի Պայմանավորվող կողմի ներդրողի ներդրումները մյուս Պայմանավորվող կողմի տարածքում չպետք է ուղղակիորեն կամ անուղղակիորեն օտարվեն, ազգայնացվեն կամ օտարմանն ու ազգայնացմանը հավասարազոր հետևանքներ ունեցող այլ միջոցներ կիրառվեն (այսուհետև՝ օտարում) բացառությամբ.

ա) հանրային շահերի դեպքում,

բ) ոչ խտրական հիմքերի վրա,

գ) Պայմանավորվող կողմի օրենքով սահմանված ընթացակարգերի համաձայն,

դ) նախնական, համարժեք և արդյունավետ փոխհատուցմամբ:

2. Փոխհատուցումը պետք է վճարվի առանց հետաձգման:

3. Փոխհատուցումը պետք է համարժեք լինի օտարված ներդրման իրական շուկայական արժեքին՝ օտարման կամ նախատեսվող օտարման մասին հանրորեն հայտնի դառնալու պահից անմիջապես առաջ, կախված այն բանից, թե որն է ավելի վաղ տեղի ունեցել:

4. Փոխհատուցումը պետք է լինի ամբողջովին իրացվելի և ազատ փոխարկելի:

5. Պայմանավորվող Կողմի տուժած ներդրողն իրավունք կունենա օտարումն իրականացնող Պայմանավորվող Կողմի օրենսդրությանը համապատասխան, այդ Կողմի դատական և այլ իրավասու կամ անկախ մարմնի կողմից իր դեպքի անհապաղ վերանայման՝ ներառյալ իր ներդրումների գնահատումը և փոխհատուցման վճարումը, սույն Հոդվածի դրույթներին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 6

Վնասների փոխհատուցում

1. Պայմանավորվող Կողմի ներդրողին, որը վնասներ է կրում մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում՝ պատերազմի կամ այլ զինված ընդհարման, արտակարգ իրավիճակի, ապստամբության, խռովության, անկարգությունների կամ այլ նման իրավիճակների հետևանքով, մյուս Պայմանավորվող Կողմը կտրամադրի այնպիսի ռեժիմ, որը կլինի ոչ պակաս բարենպաստ, քան այն, որը այս Պայմանավորվող Կողմը տրամադրում է իր կամ որևէ երրորդ պետության ներդրողներին նույնանման պայմաններում, որն ավելի բարենպաստ է:

2. Չխախտելով սույն Հոդվածի 1-ին կետը, մի Պայմանավորվող Կողմի ներդրողները, որոնք մյուս Պայմանավորվող Կողմի պետության տարածքում այդ կետում նշված իրավիճակներում վնասներ է կրում, որոնք հետևանք են.

ա) վերջինիս զինված ուժերի կամ իշխանությունների կողմից նրանց սեփականության կամ դրա մի մասի բռնագրավման,

բ) վերջինիս զինված ուժերի կամ իշխանությունների կողմից, ռազմական գործողություններով չպայմանավորված կամ իրադրության անհրաժեշտությունից չբխող, նրանց սեփականության կամ դրա մի մասի ոչնչացման,

պետք է ստանան նախնական համարժեք և արդյունավետ փոխհատուցում կամ վերականգնում այն վնասի համար, որը նրանք կրել են բռնագրավման ժամանակահատվածում իրենց սեփականության ոչնչացման արդյունքում: Այդպիսի վճարումները կլինեն ազատ փոխարկելի արժույթով, առանց հետաձգման:

ՀՈԴՎԱԾ 7

Փոխանցումներ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ իր տարածքում պետք է ապահովի, որ մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումների հետ կապված իր տարածք և իր տարածքից արվող փոխանցումներն իրականացվեն ազատ և առանց հետաձգման: Այդպիսի փոխանցումները պետք է ներառեն, մասնավորապես, բայց ոչ բացառապես.

ա) կապիտալի և ներդրումների պահպանման և ընդլայնման համար անհրաժեշտ լրացուցիչ գումարները,

բ) եկամուտները,

գ) վճարումները, որոնք կատարվում են պայմանագրերի համաձայն, ներառյալ՝ վարկային համաձայնագրերը

- դ) ներդրումների ամբողջական կամ մասնակի վաճառքից կամ լուծարումից առաջացած հասույթը,
- ե) սույն Համաձայնագրի 5-րդ կամ 6-րդ հոդվածներով նախատեսված փոխհատուցման վճարները,
- է) ներդրումային վեճերի կարգավորման արդյունքում առաջացած վճարները:
- ը) շահույթը և ներդրումներին առնչվող արտասահմանից ընդգրկված անձնակազմի այլ վարձատրությունները:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ կապահովի, որ սույն Հոդվածի 1-ին կետում նշված փոխանցումները կատարվեն ազատ փոխարկելի արժույթով փոխանցման օրը գործող փոխանակման շուկայական դրույքով՝ առանց հետաձգման:

3. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ կապահովի, որ տոկոսավճարը «LIBOR» դրույքաչափով հաշվարկվի փոխհատուցման հետ համատեղ գործընթացների սկսման պահից մինչև վճարման փոխանցման օրը 5-րդ Հոդվածի և 6-րդ Հոդվածի դրույթների համաձայն և կատարվի սույն Հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթներին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 8

Սուբրոգացիա

1. Եթե մի Պայմանավորվող Կողմը կամ իր լիազոր մարմինը (սույն Հոդվածի նպատակների համար՝ «Առաջին Պայմանավորվող կողմ») վճարում է կատարում իր ներդրողին մյուս Պայմանավորվող Կողմի (սույն Հոդվածի նպատակների համար՝ «Երկրորդ Պայմանավորվող կողմ») տարածքում իրականացված ներդրումների համար՝ երաշխավորագրի կամ վնասների փոխհատուցման հիման վրա, ապա Երկրորդ Պայմանավորվող կողմը պետք է ճանաչի.

ա) Առաջին Պայմանավորվող կողմին կամ նրա լիազորած մարմնին այդ ներդրողի ցանկացած իրավունքի կամ պահանջի փոխանցումը, համաձայն այդ պետության օրենսդրության, ինչպես նաև

բ) Առաջին Պայմանավորվող կողմը սուբրոգացիայի իրավունքով ստանում է ներդրողի իրավունքները իրացնելու և նրա պահանջները ներկայացնելու իրավունք:

2. Առաջին Պայմանավորվող կողմը պետք է բոլոր դեպքերում լիազորված լինի ստանալ՝

ա) համաձայնագրի առաքելությունից բխող իրավունքների, պահանջների և պարտավորությունների նկատմամբ միևնույն վերաբերմունքը,

բ) այդ իրավունքերի և պահանջների իրականացումից ստացվող ցանկացած վճարում:

սույն Համաձայնագրի ուժով փոխհատուցում ստացած կողմը իրավունք ունի ստանալ դրանք համապատասխան ներդրման և դրան վերաբերող եկամուտների առնչությամբ:

ՀՈԴՎԱԾ 9

Այլ պարտավորությունների կիրառումը

1. Եթե որևէ Պայմանավորվող Կողմի օրենսդրության նորմերի կամ միջազգային իրավունքի համաձայն Պայմանավորվող Կողմերի կողմից ստանձնած պարտավորությունները նրանց միջև կնքված կամ հետագայում կնքվելիք համաձայնագրերով, ի լրումն սույն Համաձայնագրի, պարունակեն դրույթներ (կանոններ)՝ ընդհանուր կամ հատուկ, որոնք այլ Պայմանավորվող Կողմի ներդրողին տրամադրում են ավելի բարենպաստ ռեժիմ, քան նախատեսվում է սույն Համաձայնագրով, ապա այդպիսի դրույթները (կանոնները) այնքանով, որքանով դրանք ավելի բարենպաստ են, կգերակայեն սույն Համաձայնագրի նկատմամբ:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ պետք է իր տարածքում ստեղծի և պահպանի իրավական հիմք՝ որպեսզի երաշխավորի ներդրողների նկատմամբ գործող իրավական ռեժիմի շարունակելիությունը, այդ թվում, յուրաքանչյուր ներդրողի նկատմամբ ստանձնած պարտավորությունների բարեխիղճ կատարումը:

ՀՈԴՎԱԾ 10

Պայմանավորվող Կողմի և մյուս Պայմանավորվող Կողմի ներդրողի միջև վեճերի կարգավորումը

1. Ցանկացած ներդրումային վեճ Պայմանավորվող Կողմի և մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի միջև պետք է կարգավորվի բանակցությունների միջոցով:

2. Եթե սույն Հոդվածի 1-ին կետում նշված վեճը չի կարգավորվում գրավոր ծանուցումը ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում, ապա վեճը ներդրողի հայեցողությամբ պետք է կարգավորվի հետևյալ կերպ.

ա) Պայմանավորվող Կողմի իրավասու դատարանի կողմից, կամ

բ) 1965թ.-ի մարտի 18-ին Վաշինգտոնում ստորագրման համար բացված «Պետությունների և այլ պետությունների քաղաքացիների միջև ներդրումային վեճերի կարգավորման» Կոնվենցիայի ներքո հիմնադրված Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային Կենտրոնի (ICSID) կողմից՝ հաշտեցման կամ արբիտրաժի միջոցով: Արբիտրաժի դեպքում յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ

սույն Համաձայնագրով նախապես իր անհետկանչելի համաձայնությունն է հայտնում, նույնիսկ Պայմանավորվող կողմի և ներդրողի միջև անհատական արբիտրալ համաձայնության բացակայության դեպքում, այդպիսի վեճերը այդ Կենտրոնի քննությանը հանձնելու վերաբերյալ: Այս թույլտվությունը ենթադրում է հրաժարում այն պահանջից, որ ներքին վարչական կամ դատական միջոցները պետք է սպառված լինեն, կամ

գ) երեք միջնորդ դատավորների կողմից կայացրած որոշման միջոցով՝ համաձայն Միավորված Ազգերի Միջազգային Առևտրային Իրավունքի Հանձնաժողովի (UNCITRAL) արբիտրաժային կանոնների, վերջին փոփոխություններով, որոնք ընդունվել են երկու Պայմանավորվող կողմերի կողմից այն ժամանակ, երբ քննարկվում էր արբիտրաժային ընթացակարգի հիմքը: Արբիտրաժի դեպքում յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ նախապես իր անհետկանչելի համաձայնությունն է տալիս, նույնիսկ Պայմանավորվող կողմի և ներդրողի միջև անհատական արբիտրալ համաձայնության բացակայության դեպքում, այդպիսի վեճերի քննությունը նշված դատարանին հանձնելու վերաբերյալ:

3. Որոշումը կլինի վերջնական և պարտադիր. այն պետք է կատարվի ազգային օրենքների համաձայն: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է ապահովի արբիտրաժային որոշման ճանաչումն ու կատարումը՝ իր համապատասխան օրենքների և կանոնակարգերի համաձայն:

4. Վեճի կողմ հանդիսացող Պայմանավորվող Կողմը չպետք է հաշտեցման կամ արբիտրաժային վարույթի կամ որոշման կատարման որևէ փուլում, առարկություն ներկայացնի, որ ներդրողը, որը վեճի մյուս կողմն է, ստացել է փոխհատուցում երաշխիքի ուժով իր ամբողջ կամ մասնակի կորուստների դիմաց:

5. Ներդրողը, ով ներկայացրել է վեճը ազգային դատարան, համաձայն սույն Հոդվածի 2-րդ կետի (ա) ենթակետի կամ 2-րդ կետ (բ)-(դ) ենթակետերում նշված արբիտրային դատարարներից որևէ մեկին, չպետք է իրավունք ունենա իր դեպքը հանձնելու որևէ այլ դատարանի կամ տրիբունալի քննությանը: Ներդրողի որոշումը, կապված դատարանի կամ արբիտրաժի հետ, վերջնական է և պարտադիր:

ՀՈԴՎԱԾ 11

Պայմանավորվող Կողմերի միջև վեճերի կարգավորումը

1. Պայմանավորվող կողմերի միջև սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված վեճերը, հնարավորության սահմաններում կկարգավորվոն բանակցությունների միջոցով:

2. Եթե վեճը, սույն Հոդվածի 1-ին կետի դրույթներին համաձայն չի կարգավորվել վեց ամսվա ընթացքում, ապա Պայմանավորվող Կողմից որևէ մեկի պահանջով այն պետք է ներկայացվի Միջնորդ Դատարան:

3. Նմանատիպ միջնորդ դատարանը պետք է լինի *ad hoc* և յուրաքանչյուր դեպքի համար կազմավորվի հետևյալ կերպ. յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կնշանակի մեկ միջնորդ դատավոր, և այդ երկու միջնորդ դատավորները պետք է համաձայնության գան Նախագահող դատավորի ընտրության շուրջ, որը պետք է լինի երրորդ պետության քաղաքացի: Դատարանի այս անդամները պետք է նշանակվեն 2 ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ մեկ Պայմանավորվող Կողմը տեղեկացնում է մյուս Պայմանավորվող Կողմին իր՝ միջնորդ դատարան դիմելու մտադրության մասին, իսկ Նախագահողը պետք է նշանակվի մյուս երկու անդամների նշանակման օրվանից սկսած երկու ամսվա ընթացքում:

4. Եթե սույն Հոդվածի 3-րդ կետով նախատեսված ժամանակահատվածներում անհրաժեշտ նշանակումները չեն կատարվել, Պայմանավորվող կողմը, այլ պայմանավորվածության բացակայության դեպքում կարող է դիմել Արդարադատության Միջազգային Դատարանի Նախագահին՝ անհրաժեշտ նշանակումները կատարելու համար: Եթե Արդարադատության Միջազգային Դատարանի Նախագահը Պայմանավորվող կողմերից մեկի քաղաքացի է կամ, եթե որևէ այլ պատճառով չի կարող կատարել նշված գործառույթը, ապա նշանակումները կատարելու համար պետք է հրավիրվի փոխնախագահը, իսկ վերջինիս անկարողության դեպքում, նույն պայմաններով նշանակումները կատարելու համար պետք է հրավիրվի Արդարադատության Միջազգային Դատարանի այն անդամը, որը հաջորդն է ավագության սկզբունքով:

5. Դատարանը կսահմանի իր ընթացակարգային կանոնները:

6. Միջնորդ դատարանը կկայացնի իր որոշումը սույն Համաձայնագրի և միջազգային իրավունքի կանոնների հիման վրա: Այն իր որոշումը կայացնում է ձայների մեծամասնությամբ, և որոշումը կլինի վերջնական և պարտադիր:

7. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ կրում է իր միջնորդ դատավորի և դատական գործընթացում իր ներկայացուցչության հետ կապված ծախսերը: Նախագահողի ծախսերը և մնացած ծախսերը երկու Պայմանավորվող կողմերը կրում են հավասար մասնաբաժիններով: Այնուամենայնիվ, Միջնորդ Դատարանը կարող է հաստատել ծախսերի բաշխման այլ կարգ:

ՀՈԴՎԱԾ 12

Սույն Համաձայնագրի կիրառելիությունը

Սույն Համաձայնագրի կկիրառվի այն ներդրումների նկատմամբ, որոնք իրականացվել են նախքան սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելը, և դրանից հետո, սակայն չի կիրառվի այն ներդրումային վեճերի նկատմամբ, որոնք ծագել են նախքան դրա ուժի մեջ մտնելը:

ՀՈԴՎԱԾ 13

Ուժի մեջ մտնելը, տևողությունը և դադարեցումը

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտի Պայմանավորվող կողմերի սույն Համաձայնագիրը ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի ավարտի մասին դիվանագիտական ուղիներով վերջին ծանուցագիրը ստանալու ամսաթվին

2. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ կմնա տասը (10) տարի ժամկետով և հետագայում կերկարաձգվի հաջորդ տասը տարվա ժամանակահատվածներով՝ մինչև Համաձայնագրի նախնական կամ հաջորդական գործողության ժամկետի ավարտից մեկ տարի առաջ Պայմանավորվող կողմերից որևէ մեկը գրավոր ծանուցում ներկայացնի մյուս Պայմանավորվող կողմին իր՝ սույն Համաձայնագիրը դադարեցնելու մտադրության մասին: Այդ դեպքում դադարեցման ծանուցումը կգործի ընթացիկ 10 տարին լրանալուն պես:

3. Այն ներդրումների նկատմամբ, որոնք կատարվել են մինչև սույն Համաձայնագրի գործողության դադարեցման ժամկետը, սույն Համաձայնագրի դրույթները կգործեն դադարեցումից հետո հաջորդ տասը (10) տարիների ընթացքում:

Ի վկայություն վերը նշվածի՝ ներքոստորագրողները, լինելով պատշաճորեն լիազորված, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Ամմանում 2014 թվականի հոկտեմբերի 29-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, արաբերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման ժամանակ ծագած տարաձայնությունների դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն լեզվով տեքստին: